«ՀԱՍՏԱՏՎԱԾ»
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
վարչության «04» հունիսի 2019թ.
թիվ 235/02Լ որոշմամբ
Վարչության նախագահ
Աշոտ Օսիպյան_____

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

Ուժի մեջ է՝ 2019թ-ի հունիսի «04»-ից

ԲԱԺԻՆ Ի. ՆՊԱՏԱԿԸ, ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ, ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Միջազգային շուկաներում բրոքերային ծառայությունների մատուցման ընթացակարգը սահմանում է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ում միջազգային ֆինանսական գործիքների հետ կապված բրոքերային գործառույթների իրականացման և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից հաճախորդներին բրոքերային ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները:

ԳԼՈՒԽ 2. ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

2. Միջազգային շուկաներում բրոքերային ծառայությունների մատուցման ընթացակարգի պահանջները տարածվում են միջազգային շուկաներում բրոքերային գործունեության իրականացման գործառույթներում ներգրավված ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի աշխատողների վրա:

ԳԼՈՒԽ 3. ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

3. Միջազգային շուկաներում բրոքերային ծառայությունների մատուցման ընթացակարգն առնչվում է հետևյալ հիմնական փաստաթղթերի հետ.
   1) ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք:
   2) «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ Օրենք:
   3) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ Օրենք:
   4) ՀՀ ԿԲ Խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» Կանոնակարգ 4/07:
   5) ՀՀ ԿԲ Խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» Կանոնակարգ 4/03:
   6) ՀՀ ԿԲ Խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 282-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց հաճախորդների միջոցների պաշտպանության կանոնները» Կանոնակարգ 4/12:
   7) ՀՀ ԿԲ Խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 69-Ն որոշմամբ հաստատված «Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և

անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» Կանոնակարգ 4/06:

8) ՀՀ ԿԲ Խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 15-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05:
9) ՀՀ ԿԲ Խորհրդի 2007 թվականի ապրիլի 12-ի թիվ 33-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի պահառության գործունեությունը» Կանոնակարգ 33:
10) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Վարչության 2019 թվականի ապրիլի 17-ի թիվ 168/02Լ որոշմամբ հաստատված «Արժեթղթերի պահառության իրականացման ընթացակարգ»:
11) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2017 թվականի մայիսի 15-ի թիվ 13/03Լ-Հ որոշմամբ հաստատված «Արխիվային գործընթացի կազմակերպման կարգ»:
12) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Վարչության 2018 թվականի մայիսի 23-ի թիվ 179/01Լ որոշմամբ հաստատված «Բանկային (այդ թվում առարկայազուրկ մետաղական) հաշիվների բացման, սպասարկման (վարման) և փակման ընթացակարգ»:
13) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2019 թվականի մարտի 15-ի թիվ 08/04Լ-Հ որոշմամբ հաստատված «Հաճախորդներից ստացված բողոքների և դիմում-առաջարկությունների հետ տարվող աշխատանքների կարգ»:
14) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 11/01Լ որոշմամբ հաստատված «Իրավական ակտերի նախագծերի պատրաստման և ընդունման կարգ»:
15) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 11/02Լ որոշմամբ հաստատված «Բանկի տեղեկատվական ակտիվների դասակարգման և նույնականացման կարգ»:
16) ԻՍՕ/ԻԷԿ 27001 «Տեղեկատվական տեխնոլոգիաներ. Անվտանգության ապահովման մեխանիզմներ. Տեղեկատվական Անվտանգության Կառավարման Համակարգեր. Պահանջներ» ստանդարտ:

ԳԼՈՒԽ 4. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

4. Միջազգային շուկաներում բրոքերային ծառայությունների մատուցման ընթացակարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝
   1) ***Բանկ (Բրոքեր)***՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ:
   2) ***Ընթացակարգ***՝ Միջազգային շուկաներում բրոքերային ծառայությունների մատուցման ընթացակարգ:
   3) ***Օրենք***՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք:
   4) ***Ֆինանսական գործիք***՝ օտարերկրյա առևտրային հարթակներում ազատ շրջանառվող ցանկացած ֆինանսական գործիք, այդ թվում՝ արժեթղթեր, դրամական շուկայի գործիքներ, ածանցյալներ, արժույթ, թանկարժեք մետաղներ և այլն:
   5) ***ԱՀ (Առևտրային հարթակ)***՝ ցանկացած կարգավորվող շուկա և ֆինանսական գործիքների առևտրի կազմակերպման համար ներգրավված այլ միջոց, կազմակերպություն կամ համակարգ, որը որոշակի կանոնների համաձայն ապահովում է ֆինանսական գործիքների առքուվաճառք և դրա արդյունքում վերջնահաշվարկ իրականացնելու հնարավորություն և միջոցներ:
   6) ***ԱՀ կանոններ***՝ Բրոքերի կողմից Ընթացակարգի համաձայն բրոքերային ծառայությունների մատուցման համար օգտագործվող ԱՀ-ի գործող ներքին կանոններ, ընթացակարգեր, քաղաքականություն, կարգադրություններ, կանոնակարգեր, որոնց կատարումը պարտադիր է այդ համակարգի անդամների կամ դրանից օգտվող այլ անձանց համար:
   7) ***Առևտրային նստաշրջան***՝ ժամանակահատված, որի ընթացքում ԱՀ կանոնների համաձայն տվյալ ԱՀ-ում տեղի է ունենում արժեթղթերի/ածանցյալների առևտուր:
   8) ***Ածանցյալ***՝ ածանցյալ գործիք է համարվում ժամկետային իրականացման (կատարման) իրավունքը և (կամ) պարտավորությունը հավաստող Արժեթուղթը, որի գինն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կախված է՝
      ա. արժեթղթի շուկայական (բորսայական) գնից,
      բ. տոկոսադրույքից կամ այլ հատուցումից,
      գ. արժեթղթերի ինդեքսից,
      դ. արտարժույթի փոխարժեքից,
      ե. վարկային կամ այլ ռիսկից,
      զ. ապրանքի կամ թանկարժեք մետաղի շուկայական (բորսայական) գնից,
      է. գնաճի մակարդակից կամ պաշտոնական տնտեսական վիճակագրության այլ ցուցանիշներից:
   9) ***Գործարք***՝ Ֆինանսական գործիքների օտարման և ձեռքբերման գործարքներ, որոնք կատարվում են Հանձնարարականների հիման վրա՝ ԱՀ-ից դուրս կամ ԱՀ-ում՝ տվյալ ԱՀ կանոնների համաձայն:

10) ***Forex գործարք***՝«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ստանդարտացված ածանցյալ ֆինանսական գործիք չհանդիսացող ցանկացած ածանցյալ ֆինանսական գործիք (ոչ ստանդարտացված ածանցյալ ֆինանսական գործիք (գործարք)), որի գինն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կախված է արտարժույթի փոխարժեքից և որը կնքվում է լեվերիջով:
11) ***Լեվերիջով գործարք***՝ ոչ ստանդարտացված ածանցյալ ֆինանսական գործարք, որը կնքվում է լեվերիջով, այդ թվում՝ Forex գործարք:
12) ***Արժույթ (արտարժույթ)***՝ որևէ պետության և/կամ պետությունների համախմբի օրինական վճարամիջոց համարվող դրամական արժեք:
13) ***Հաճախորդ***՝ Բրոքերի հետ բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած ֆիզիկական և/կամ իրավաբանական անձ:
14) ***Գործակալ***՝ անձ, որի ներգրավմամբ և միջնորդական ծառայություններից օգտվելու միջոցով՝ Բրոքերը մատուցում է Ծառայությունները Հաճախորդին:
15) ***Գործառնական օր***՝ ցանկացած աշխատանքային օրվա 09^{30}-ից 19^{00}, երբ Բրոքերը իրականացնում է գործառնություններ:
16) ***Ոչ բավարար ծածկույթով գործարքներ***՝ Հաճախորդի անունից Հաճախորդի Հանձնարարականի համաձայն Բրոքերի կողմից կատարվող կամ Գործակալին փոխանցվող գործարքներ (գործարքներ, որոնց կատարման Հանձնարարականը Բրոքերը ընդունում է Հաճախորդից և ի կատարումն հաղորդում Գործակալին, այդ թվում՝ որևէ ԱՀ-ի միջոցով), որոնց վերաբերյալ համապատասխան Հանձնարարականը ներկայացնելու պահին Հաճախորդի հաշվին առկա չեն դրանով նրա պարտավորությունները ամբողջությամբ կատարելու համար անհրաժեշտ Միջոցներ և այդ Միջոցները պայմանականորեն կամ իրականում հասանելի են դարձվում Հաճախորդի համար Բրոքերի և/կամ Գործակալի կողմից՝ հնարավոր դարձնելով համապատասխան Գործարքի կնքումը:
17) ***Գործարքի էական պայմաններ***՝ Արժեթղթի տեսակը (կամ վերջինիս տարբերակիչ ծածկագիրը), Արժեթղթի թողարկողը, գործարքի տեսակը (արժեթղթի առք, վաճառք, Ածանցյալով Հաճախորդի իրավունքների իրականացման գործարք, բաժանորդագրության պատվեր, ռեպո, հակադարձ ռեպո), Հանձնարարականով կատարման ծավալը (արժեթղթերի/քանակը), միավոր արժեթղթի գնման/վաճառքի/կատարման գնային պայմանները (եթե պատվերը շուկայական չէ):
18) ***«Շուկայական պատվեր»***՝ Հաճախորդի կողմից Բրոքերին տրվող Հանձնարարական, որը նախատեսում է Ֆինանսական գործիքի գնման և/կամ վաճառքի Հանձնարարականի անհապաղ կատարում այդ պահին շուկայում ձևավորված գնով Հանձնարարականի կատարման միջոցով:

19) ***Ապահովման պահ***՝ տվյալ ԱՀ-ում Գործարքի կատարման օրվա առևտրային նստաշրջանին նախորդած առևտրային նստաշրջանի բացման պահ:
20) ***Դիրք կամ բաց դիրք***՝ Գործարքներով Հաճախորդի պահանջների ու պարտավորությունների կշիռ՝ արտահայտված արժույթով կամ արժեթղթերով, որը հավասար չէ զրոյի:
21) ***Հանձնարարական***՝ Հաճախորդի կողմից Բրոքերին ներկայացվող և Հաճախորդի Միջոցների հաշվին Բրոքերի կողմից կատարման կամ Բրոքերի կողմից երրորդ անձանց ի կատարում հաղորդման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ, էլեկտրոնային կամ ձայնային հաղորդագրություն, որի նպատակը Հաճախորդի կողմից Ֆինանսական գործիքի օտարումը, ձեռքբերումը կամ փոխանցումն է:
22) ***Հաղորդագրություն***՝ ցանկացած տեղեկատվության առաքում, փոխանակում, ծանուցում, Հանձնարարականի ներկայացում, որ տեղի է ունենում Հաճախորդի և Բրոքերի միջև կնքված Պայմանագրի շրջանակում:
23) ***Հաճախորդի հաշիվ***՝ Բրոքերային հաշիվը, դրա դրամային և արժեթղթերի ենթահաշիվները և/կամ Պայմանագրում նշված դրամային և/կամ արժեթղթերի հաշիվը և դրանց ենթահաշիվները միասին:
24) ***Համակարգ***՝ Գործակալների և/կամ Բրոքերի գործառնական կառավարման ներքո գտնվող Գործարքների կնքման հնարավորություն ընձեռող էլեկտրոնային (ցանցային, ինտերնետ) գործիք հանդիսացող ծրագրային փաթեթ (ապահովում)՝ համապատասխան ինտերֆեյսով, որը Հաճախորդին ծառայությունների մատուցման հասանելիության ապահովման տեխնիկական միջոց է և որի միջոցով Հաճախորդների հնարավորություն է ընձեռվում ինքնուրույն գործողություններով կատարման փոխանցել գործարքների կնքման Հանձնարարականներ:
25) ***Պայմանագիր***՝ Հաճախորդի և Բրոքերի միջև կնքվող «Միջազգային շուկաներում բրոքերային ծառայությունների մատուցման և բրոքերային հաշիվների սպասարկման պայմանագիր», որի անբաժանելի մասն է կազմում Ընթացակարգը:
26) ***Միջոցներ***՝ դրամ (ցանկացած արժույթի) և արժեթղթեր, որոնք Հաճախորդը տրամադրել է Բրոքերին իր հանձնարարականների կատարման և վերջնահաշվարկի ապահովման նպատակով կամ որոնք առաջացել են (ստացվել են) հաճախորդի հանձնարարականները կատարվելու արդյունքում:
27) ***Կիրառվող իրավունք***՝ այն երկրի օրենքները և համապարտադիր բնույթ կրող այլ իրավական ակտերը, որոնք տարածվում են ի կատարումն Պայմանագրի և Ընթացակարգի Բրոքերի կողմից իրականացված գործողությունների նկատմամբ:
28) ***Ֆիդուցիար պարտականություն***՝ Բրոքերի պարտականությունն է գործել ի

շահ Հաճախորդի՝ դրսևորելով բարեխղճություն և ողջամտություն:

29) ***Վերջնահաշվարկ՝*** գործարքի կատարման ժամկետի լրացման կապակցությամբ փոխադարձ պարտավորությունների կատարում դրանց կատարման ժամկետին, որի կատարման կարգը սահմանված է տվյալ գործարքի կնքման գործող պայմաններով:

30) ***Պատասխանատու ստորաբաժանում՝*** Բանկի Ներդրումային բանկային ծառայությունների դեպարտամենտը:

31) ***Պատասխանատու աշխատակից՝*** Բանկի աշխատակից, որը Պայմանագրով և Ընթացակարգով ամրագրված պայմանների համաձայն սպասարկում է Հաճախորդներին:

32) ***Կանոնակարգ 4/05՝*** ՀՀ ԿԲ Խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 15-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05:

33) ***Կանոնակարգ 4/06՝*** ՀՀ ԿԲ Խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 69-Ն որոշմամբ հաստատված «Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» Կանոնակարգ 4/06:

5. Ընթացակարգում օգտագործվող այլ հասկացությունները, սահմանված չլինելու դեպքում, ունեն Օրենքում և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերում սահմանված նշանակությունը, իսկ դրանցով սահմանված չլինելու դեպքում՝ միջազգային գործարար սովորույթների համաձայն այդ հասկացություններին տրվող նշանակությունը, եթե այլ բան ակնհայտորեն չի բխում կոնկրետ հասկացության կիրառման մասնավոր դեպքից:

ԳԼՈՒԽ 5. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

6. Խմբագրություն 02, փոփոխվել է Ընթացակարգի անվանումը, նախկինում՝ Բանկի Վարչության 2018 թվականի հունիսի 30-ի թիվ 214/02Լ որոշմամբ հաստատված «Օտարերկրյա արժեթղթերով բրոքերային ծառայությունների մատուցման ընթացակարգ», որն ամբողջությամբ վերամշակվել է:

ԳԼՈՒԽ 6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

7. Ընթացակարգն ունի հետևյալ հավելվածները՝

1) Հավելված 1՝ Դրամական միջոցների տեղափոխման հանձնարարական:
2) Հավելված 2՝ Գործարքի իրականացման հանձնարարական:
3) Հավելված 3՝ Բրոքերային հաշվի, Բրոքերային հաշվի ենթահաշիվների բացման դիմում:
4) Հավելված 4՝ Շահերի բախման սահմանափակման քաղաքականություն
5) Հավելված 5՝ Լեվերիջով գործարքների, այդ թվում՝ Forex գործարքների ռիսկայնության տեղեկացվածության վերաբերյալ հայտարարություն:

ԳԼՈՒԽ 7. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՐՈՔԵՐԻ ՄԱՍԻՆ

8. Ստորև ներկայացվում է Բրոքերի մասին որոշակի տեղեկատվություն՝
   1) Լրիվ անվանումը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերություն. կրճատ անվանումը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (Ընթացակարգում՝ Բրոքեր):
   2) Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, 0010, Պուշկինի 19:
   3) Էլեկտրոնային հասցեն՝ araratbank@araratbank.am, ինտերնետային կայքը՝ www.araratbank.am, հեռախոսահամարը՝ +374 10 592323:
   4) Բրոքերը բրոքերային ծառայությունների մատուցումը համատեղում է Օրենքով նախատեսված այլ տեսակի ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայությունների մատուցման և բանկային գործառնությունների հետ՝ Բանկային գործունեության լիցենզիայի հիման վրա:
   5) Բրոքերը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյանի 6 հասցեում, հեռ՝ 583 841, կայք՝ www.cba.am էլ. փոստ՝ mcba@cba.am:

ԲԱԺԻՆ II. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9. Ընթացակարգով կարգավորվում են Բրոքերի և Հաճախորդի միջև հարաբերությունները՝ կապված Պայմանագրում նշված, ինչպես նաև հետևյալ ծառայությունների մատուցման հետ՝
   1) վերջնահաշվարկի ապահովում,
   2) բրոքերային ծառայություններին առնչվող պահառուական գործառնություններ,
   3) վերջնահաշվարկի համար անհրաժեշտ արժույթի տրամադրում/ փոխանակում,

4) ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքում:

10. Ընթացակարգը և Պայմանագիրը կազմում են միմյանց անբաժանելի մասը և միայն միասին են հանդիսանում վավեր: Եթե Պայմանագրով նախատեսված է այլ բան, քան Ընթացակարգի դրույթներում, ապա գերակայում է Պայմանագրի համապատասխան դրույթը: Ընթացակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Բանկի կողմից միակողմանիորեն՝ այդպիսի փոփոխությունից կամ լրացումից հետո փոփոխության/լրացման մասին Հաճախորդին ծանուցելու պայմանով: Պատշաճ ծանուցում է համարվում Բրոքերի պաշտոնական ինտերնետային կայքում փոփոխված Ընթացակարգի հրապարակումը:
11. Պահպանելով հաճախորդի նկատմամբ իր Ֆիդուցիար պարտականությունները՝ Բրոքերը Պայմանագրի համաձայն ծառայություններ մատուցելիս առանց Հաճախորդի համաձայնության կարող է օգտվել Գործակալի ծառայություններից: Հաճախորդի Հանձնարարականները կատարելու համար Բրոքերն իր հայեցողությամբ իրավունք ունի ներգրավել նաև այլ կազմակերպություններ, այդ թվում՝ արժեթղթերի շուկայում մասնագիտացված անձանց, ինչպես նաև օգտվել միջազգային և տեղական շուկաներում այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններից և ԱՀ-ներից, եթե Հաճախորդի հանձնարարականում չի նշված այն կոնկրետ միջնորդը, որի միջոցով Բրոքերը պետք է կատարի Գործարքը:

ԳԼՈՒԽ 2. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

12. Նախքան Պայմանագրի կնքումը Բրոքերը Հաճախորդին տրամադրում է տեղեկատվություն հետևյալի մասին.
    1) Բրոքերի և նրա կողմից մատուցվող ծառայությունների մասին,
    2) արժեթղթերի մասին,
    3) գործարքների կնքման վայրի (միջոցի) մասին (ֆոնդային բորսա, այլ կարգավորվող շուկա կամ չկարգավորվող շուկա),
    4) Գործարքների հետ կապված ծախսերի և միջնորդավճարների մասին:
13. Տրամադրվող տեղեկատվությունը Հաճախորդին պետք է հնարավորություն տա հասկանալու իրեն առաջարկվող ներդրումային ծառայության և արժեթղթերի էությունը և դրանց հետ կապված ռիսկերը: Այդ տեղեկատվությունը կարող է ներկայացվել Հաճախորդներին ստանդարտ ձևով (մասնավորապես՝ գրքույկի ձևով):
14. Բրոքերը Հաճախորդին տրամադրում է հետևյալ տեղեկությունները իր և իր կողմից մատուցվող ծառայությունների մասին՝

1) Բրոքերի անվանումը և կապի միջոցները,
2) տեղեկատվություն այն մասին, թե ինչ լեզուներով Հաճախորդը կարող է կապ հաստատել Բրոքերի հետ և ստանալ փաստաթղթեր և այլ տեղեկություններ,
3) միմյանց հետ կապ հաստատելու և տեղեկատվություն փոխանակելու մեթոդները, ինչպես նաև Հանձնարարականների ընդունման և հաղորդման կարգը,
4) այն հիմքերը, որոնց համաձայն Բրոքերն իրավասու է մատուցել ներդրումային ծառայություններ, ինչպես նաև Բրոքերին լիցենզավորած և (կամ) գրանցած իրավասու մարմնի անվանումը և կապի միջոցները,
5) տեղեկություններ հաճախորդներին ներկայացվող հաշվետվությունների, դրանց ներկայացման հաճախականության և ժամկետների, ինչպես նաև ներկայացման կարգի մասին,
6) այն քայլերի համառոտ նկարագիրը, որոնք իրականացվել են Բրոքերի միջոցների պաշտպանությունը ապահովելու համար, ներառյալ Բրոքերի կողմից ներդրողների փոխհատուցման, միջոցների երաշխավորման կամ նման այլ սխեմաներում մասնակցության մասին,
7) շահերի բախման սահմանափակման քաղաքականության համառոտ նկարագիրը, իսկ Հաճախորդի պահանջի դեպքում՝ շահերի բախման քաղաքականության ամբողջ նկարագիրը (Հավելված 4):

15. Բրոքերը Հաճախորդին պետք է տեղեկացնի նաև՝
    1) այն մասին, որ Հաճախորդի Միջոցները կարող են հաշվառվել Բրոքերի անունով բացված արժեթղթերի կամ բանկային հաշվում, ինչպես նաև այդ հաշիվներում պահելու հետ կապված ռիսկերը,
    2) Հաճախորդի Միջոցները Բրոքերի անունից գրավադրման կամ փոխառությամբ տրամադրելու հնարավորության մասին,
    3) Բրոքերի պարտավորությունների մասին, եթե Հաճախորդի Միջոցները փոխառությամբ տրամադրվում են կամ այլ կերպ օգտագործվում են ի շահ Բրոքերի կամ այլ Հաճախորդի:
16. Բրոքերը Հաճախորդին պետք է տրամադրի արժեթղթերի և դրանց հետ առնչվող ռիսկերի նկարագիրը, որով պարզ և հասկանալի ձևով ներկայացվում են յուրաքանչյուր տեսակի (բաժնետոմս, պարտատոմս և այլն) Արժեթղթի առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց առնչվող ռիսկերը:
17. Եթե Բրոքերը Հաճախորդին տրամադրում է տեղեկություններ այնպիսի արժեթղթերի մասին, որոնք այդ պահին հրապարակային առաջարկի առարկա են և այդ նպատակով ազդագիր է հրապարակվել, ապա Հաճախորդին պետք է տեղեկացնի, թե որտեղ է հրապարակված այդ ազդագիրը կամ որտեղից կարելի է այն ձեռք բերել:

18. Այն դեպքում, երբ արժեթղթերից բխող ռիսկերը երաշխավորված են երրորդ անձի կողմից, Բրոքերը Հաճախորդին պետք է ներկայացնի տեղեկատվություն երաշխավորության և երաշխավորություն տվողի մասին:
19. Բրոքերը Հաճախորդին պետք է տրամադրի հետևյալ տեղեկատվությունը ծախսերի և միջնորդավճարների մասին՝
    1) Բրոքերի ծառայություններից օգտվելու համար Հաճախորդի կողմից վճարման ենթակա համախառն գումարը՝ ներառյալ բոլոր միջնորդավճարները, ծախսերը և այլ վճարները, ինչպես նաև բոլոր հարկային վճարները, որոնք պահվում են Բրոքերի կողմից՝ որպես հարկային գործակալ: Եթե հնարավոր չի լինում տեղեկացնել գանձման ենթակա ճշգրիտ գումարի մասին, ապա պետք է ներկայացնել հաշվարկման կարգը,
    2) եթե Ընթացակարգի 19-րդ կետի 1-ին ենթակետում նշված համախառն գումարի որևէ մաս վճարվում է արտարժույթով կամ ներկայացված է արտարժույթով, ապա նշվում է արտարժույթը, փոխանակման կուրսը և դրա հետ կապված ծախսերը,
    3) վճարումներ կատարելու եղանակները, ընդ որում՝ գանձվող միջնորդավճարի մասին տեղեկատվությունը Հաճախորդին ներկայացվում է նաև առանձին տողով:
20. Ընթացակարգի 14–19-րդ կետերի պահանջները (բացառությամբ 15-րդ կետի 2-րդ ենթակետից), կարող են չպահպանվել պրոֆեսիոնալ Հաճախորդների դեպքում: Հաճախորդը կարող է համարվել պրոֆեսիոնալ ՀՀ օրենսդրությամբ և Ընթացակարգով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 3. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

21. Բրոքերը Հաճախորդից պահանջում է տեղեկատվություն իր կողմից մատուցվող ներդրումային ծառայության կամ արժեթղթի վերաբերյալ Հաճախորդի գիտելիքների և փորձի մասին, որը հնարավորություն կտա գնահատել, թե արդյո՞ք տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը համապատասխանում է հաճախորդի պահանջներին: Եթե Բրոքերը Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա գտնում է, որ իր կողմից մատուցվող ներդրումային ծառայությունը կամ Արժեթուղթը չի համապատասխանում Հաճախորդի պահանջներին, ապա զգուշացնում է Հաճախորդին այդ մասին: Այդ զգուշացումը կարող է ներկայացվել Հաճախորդին ստանդարտ ձևով:
22. Այն դեպքում, երբ հաճախորդը չի տրամադրում Ընթացակարգի 21-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը կամ տրամադրում է ոչ բավարար

տեղեկատվություն, Բրոքերը զգուշացնում է Հաճախորդին այն մասին, որ Հաճախորդի նման վարքագիծը թույլ չի տալիս գնահատել, թե արդյո՞ք Բրոքերի կողմից մատուցվող ներդրումային ծառայությունը կամ Արժեթուղթը համապատասխանում է Հաճախորդի պահանջներին: Այդ զգուշացումը կարող է ներկայացվել Հաճախորդին ստանդարտ ձևով:

23. Բրոքերը հիմնվում է Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունների վրա, բացառությամբ այն դեպքի, եթե գիտեր կամ կարող էր իմանալ, որ տեղեկատվությունն ակնհայտորեն հնացած է, ոչ ճիշտ կամ ոչ լիարժեք:

ԳԼՈՒԽ 4. ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԵՎ ՈՉ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

24. Նախքան ներդրումային ծառայությունների պայմանագրի կնքումը և ներդրումային ծառայությունների մատուցումը Բրոքերը դասակարգում է հաճախորդներին՝ որպես պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ բրոքերային բոլոր ծառայությունների մասով, կամ որևէ գործարքի կամ արժեթղթի որևէ տեսակով (դասով) գործարքների մասով:

25. Պրոֆեսիոնալ հաճախորդ են համարվում.
    1) ներդրումային ընկերությունները, օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերը, բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, ներդրումային, կենսաթոշակային ֆոնդերը և ներդրումային ֆոնդի կառավարիչները, ինչպես նաև օտարերկրյա պետությունում գրանցված այն իրավաբանական անձինք, որոնք, տվյալ պետության օրենսդրության համաձայն, իրավունք ունեն իրականացնելու սույն ենթակետով սահմանված որևէ անձի գործունեություն.
    2) Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետության համայնքները, Կենտրոնական բանկը, օտարերկրյա պետությունները, օտարերկրյա պետությունների տեղական ինքնակառավարման մարմինները, օտարերկրյա պետությունների կենտրոնական բանկերը.
    3) միջազգային ֆինանսական կազմակերպությունները, այդ թվում՝ Արժույթի միջազգային հիմնադրամը, Եվրոպական կենտրոնական բանկը, Եվրոպական ներդրումային բանկը.
    4) իրավաբանական անձինք, որոնք բավարարում են հետևյալ չափանիշներից առնվազն երկուսին.
        ա. ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքմանը նախորդող տարվա վերջի դրությամբ անձի ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 500 միլիոն

Հայաստանի Հանրապետության դրամը,

բ. ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքմանը նախորդող տարվա գործունեությունից ստացված անձի իրացման շրջանառությունը (համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի) գերազանցում է մեկ միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամը,

գ. ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման պահին նախորդող ամսվա վերջի դրությամբ (հայտնի չլինելու դեպքում վերջին ամսվան նախորդող ամսվա դրությամբ) անձի ընդհանուր կապիտալը կազմում է 50 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը:

26. Հաճախորդի նախաձեռնությամբ Բրոքերի կողմից պրոֆեսիոնալ հաճախորդ կարող են դասակարգվել Ընթացակարգի 25-րդ կետում չնշված այն անձինք, ովքեր բավարարում են հետևյալ չափանիշներից առնվազն երկուսին.
    1) Հաճախորդը դիմումի ներկայացմանը նախորդող 4 եռամսյակների ընթացքում արժեթղթերի շուկայում իրականացրել է 10 և ավելի գործարք միջին եռամսյակային կտրվածքով, ընդ որում՝ մեկ գործարքի ծավալը միջին հաշվով կազմում է առնվազն մեկ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ,
    2) Հաճախորդի արժեթղթերի փաթեթի մեծությունը դիմումի ներկայացման պահին գերազանցում է 100 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը,
    3) Հաճախորդը ֆինանսական շուկայում ունի առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, որը պահանջում է հաճախորդին մատուցվող այն ծառայությունների հետ կապված գիտելիքներ, որոնց հետ կապված վերջինս նախաձեռնություն է իրականացնում պրոֆեսիոնալ դասակարգվելու համար:
27. Բրոքերի կողմից Ընթացակարգի 26-րդ կետում նշված անձանց պրոֆեսիոնալ հաճախորդի դասակարգումը համարվում է վավեր, եթե հաճախորդի գիտելիքների և փորձի վերաբերյալ Բրոքերի կողմից իրականացված գնահատումը հավաստիացնում է, որ հաճախորդը ներդրումային ծառայություններից օգտվելու, ներդրումային որոշում կայացնելու և դրանց հետ կապված ռիսկերն ընկալելու համապատասխան ունակություն և գիտելիք ունի: Կազմակերպությունների դեպքում գիտելիքի և փորձի վերաբերյալ գնահատումն իրականացվում է կազմակերպության այն ղեկավարի, աշխատակցի կամ անձի նկատմամբ, որն իրավասու է կազմակերպության անունից գործարքներ կնքել:
28. Կանոնակարգ 4/05-ով սահմանված որակավորման կարգը և մասնագիտական համապատասխանության չափանիշները Բրոքերի համար ուղեցույց են

հանդիսանում հաճախորդների՝ Ընթացակարգի 14-րդ կետում նշված գիտելիքների և փորձի գնահատման համար:

29. Բրոքերի կողմից Հաճախորդի ունակության և գիտելիքների գնահատման նպատակով հաճախորդին տրամադրվում է 30 թեստային հարցերից կազմված հարցաթերթիկ և այն լրացնելու համար տրվում է 60 րոպե ժամանակ: Հաճախորդների ունակության և գիտելիքների գնահատման անցողիկ արդյունք է համարվում հարցաթերթիկում նշված հարցերի 70 և ավելի տոկոսին Հաճախորդի կողմից տրված ճիշտ պատասխանների առկայությունը:
30. Հաճախորդի կողմից լրացված թեստային հարցաթերթիկի հիման վրա նույն աշխատանքային օրվա ընթացքում կազմվում է Պատասխանատու աշխատակցի կողմից ստորագրված արձանագրություն, որը ներառում է հաճախորդի ունակության և գիտելիքի գնահատման արդյունքները:
31. Նախքան պրոֆեսիոնալ հաճախորդի հետ ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելը կամ Ընթացակարգի 26-րդ կետում նշված անձանց պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգելը՝ Բրոքերն այդ հաճախորդին գրավոր տեղեկացնում է այն մասին, որ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված որոշակի պահանջներ չեն գործելու իր և հաճախորդի փոխհարաբերություններում՝ ներկայացնելով այդ պահանջների էությունը:
32. Ընթացակարգի 26-րդ կետում սահմանված հաճախորդները, որոնք Օրենքում նշված ներդրումային ծառայություններից որևէ մեկի մասով կամ բոլոր ծառայությունների, կամ որևէ գործարքի կամ արժեթղթի որևէ տեսակով (դասով) գործարքներին վերաբերող ծառայության կամ ծառայությունների մասով նախաձեռնել են պրոֆեսիոնալ դասակարգվել, համապատասխան գրավոր հայտարարություն են ներկայացնում ներդրումային ծառայություններ մատուցող անձին այն մասին, որ.
    1) համաձայն են դասակարգվել որպես պրոֆեսիոնալ հաճախորդ՝ տվյալ ծառայության կամ գործարքի մասով,
    2) տեղյակ են, որ որևէ ծառայության կամ որևէ գործարքի մասով որպես պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգվելու դեպքում հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական որոշակի պահանջներ չեն գործում իրենց նկատմամբ տվյալ ծառայության կամ գործարքի մասով, և այդ պատճառով իրենք կորցնում են որոշակի պաշտպանվածություն:
33. Նախքան պրոֆեսիոնալ հաճախորդների հետ Լեվերիջով գործարքների, այդ թվում՝ Forex գործարքների հետ կապված ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելը կամ Ընթացակարգի 26-րդ կետում նշված անձանց՝ Լեվերիջով գործարքների, այդ թվում՝ Forex գործարքների մասով պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգելը.

1) Բրոքերը Հաճախորդին ծանուցում է տվյալ գործարքներին առնչվող ռիսկերի մասին: Լեվերիջով գործարքներ, այդ թվում՝ Forex գործարքներ կնքելու նպատակով օնլայն ԱՀ-ներին (էլեկտրոնային հաղորդակցման համակարգերին, տերմինալներին և այլ ծրագրերին) մուտք գործելու հնարավորության տրամադրումը համարվում է հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունման և հաղորդման հետ կապված ներդրումային ծառայություն կամ իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում,
2) տվյալ հաճախորդները գրավոր հայտարարություն են ներկայացնում Բրոքերին այն մասին, որ տեղյակ են Լեվերիջով գործարքներին, այդ թվում՝ Forex գործարքներին առնչվող ռիսկերի մասին, ընդ որում՝ այս հայտարարությունն անհրաժեշտ է ներկայացնել Ընթացակարգի Հավելված 5-ով սահմանված բովանդակությամբ՝ Հաճախորդի ստորագրությամբ:

34. Ընթացակարգի 25-րդ կետում նշված Պրոֆեսիոնալ համարվող հաճախորդի նախաձեռնությամբ, կամ եթե առկա է հաճախորդի համաձայնությունը՝ նաև Բրոքերի նախաձեռնությամբ, թույլատրվում է պրոֆեսիոնալ համարվող հաճախորդին վերաբերվել որպես ոչ պրոֆեսիոնալ և տվյալ հաճախորդի նկատմամբ կիրառել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջները:
35. Բրոքերն իր և Հաճախորդի միջև կնքվող պայմանագրում պարտադիր կերպով ներառում է դրույթ, որի համաձայն նշվում է, որ եթե պրոֆեսիոնալ համարվող հաճախորդը կարծում է, որ ի վիճակի չէ գնահատել և կառավարել ներդրումային ծառայություններից կամ ներդրումներից բխող ռիսկերը, պրոֆեսիոնալ հաճախորդի պարտավորությունն է դիմել Բրոքերին՝ իրեն որպես ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ վերաբերվելու համար, ինչը հնարավորություն կտա օգտվել ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական պահանջներից:
36. Պրոֆեսիոնալ հաճախորդ համարվող անձը Ընթացակարգի 34-րդ և 35-րդ կետերի համաձայն Բրոքերի կողմից դասակարգվում է ոչ պրոֆեսիոնալ Բրոքերի հետ կնքված պայմանագրի հիման վրա: Պայմանագրում հստակ ամրագրվում է, թե արդյոք Հաճախորդի ոչ պրոֆեսիոնալ դասակարգումը վերաբերում է բրոքերային բոլոր ծառայություններին, որևէ գործարքին, թե արժեթղթի որևէ տեսակով (դասով) գործարքներին:
37. Բրոքերը՝ Ընթացակարգի 25-րդ կետի 4-րդ ենթակետում նշված պրոֆեսիոնալ հաճախորդների հետ ներդրումային ծառայությունների մատուցման

պայմանագիր կնքելիս կամ Ընթացակարգի 26-րդ կետում նշված անձանց պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգելիս, գրավոր հարցում է կատարում տվյալ հաճախորդներին նաև որակավորված ներդրող համարվելու համաձայնության վերաբերյալ: Եթե առկա է հաճախորդի համաձայնությունը, ապա վերջինս ստորագրում է Բրոքերի կողմից տրամադրված Կանոնակարգ 4/06-ի Հավելված 1-ով սահմանված որակավորված ներդրող գրանցվելու դիմումը: Ստորագրված դիմումը ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից ներկայացվում է Կենտրոնական բանկ դիմումը ստորագրելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով (Կենտրոնական բանկի կողմից տրամադրված հասցեով): Սի-Բի-Էյ-նեթ համակարգերի խափանման դեպքում Բրոքերը դիմումը ներկայացնում է մագնիսական կամ էլեկտրոնային կրիչներով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն:

38. Պրոֆեսիոնալ համարվող հաճախորդները, որոնք Ընթացակարգի 37-րդ կետի համաձայն ստորագրել են որակավորված ներդրող գրանցվելու դիմում, Կանոնակարգ 4/06-ով սահմանված գրանցված որակավորված ներդրողների Տեղեկատվական բազայում գրանցումից դուրս գալու համար ստորագրում և Բրոքերին են ներկայացնում Կանոնակարգ 4/06-ի հավելված 2-ով սահմանված Տեղեկատվական բազայում գրանցումից հանելու մասին դիմումը: Բրոքերը ստորագրված դիմումը էլեկտրոնային՝ Ընթացակարգի 37-րդ կետով սահմանված կարգով ներկայացնում է Կենտրոնական բանկ անհապաղ, բայց ոչ ուշ, քան պրոֆեսիոնալ հաճախորդի կողմից ստորագրված դիմումը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:

39. Բրոքերը Հաճախորդի պրոֆեսիոնալ կարգավիճակի դադարեցման վերաբերյալ, ինչպես նաև Ընթացակարգի 25-րդ կետի 4-րդ ենթակետում նշված պրոֆեսիոնալ Հաճախորդների ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծելու վերաբերյալ (միայն այն հաճախորդների մասով, որոնք Ընթացակարգի 37-րդ կետի համաձայն համաձայնություն են տվել Բրոքերին համարվել որակավորված ներդրող) տեղեկացում են ներկայացնում Կենտրոնական բանկ անհապաղ, բայց ոչ ուշ, քան պրոֆեսիոնալ կարգավիճակի դադարեցումից (Ընթացակարգի 25-րդ կետի 4-րդ ենթակետում նշված պրոֆեսիոնալ հաճախորդների դեպքում ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծելուց) հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում: Տեղեկացումը ներկայացվում է էլեկտրոնային՝ Ընթացակարգի 37-րդ կետով սահմանված կարգով և ներառում է Բրոքերի անվանումը, Հաճախորդի անունը, ազգանունը, հայրանունը (անվանումը, կազմակերպական-իրավական ձևը), Հաճախորդի հանրային ծառայության համարանիշը, բացակայության դեպքում՝ անձին նույնականացնող այլ փաստաթղթի համարը (հարկ վճարողի հաշվառման համարը), պրոֆեսիոնալ

հաճախորդի պրոֆեսիոնալ կարգավիճակի դադարեցման ամսաթիվը (Ընթացակարգի 25-րդ կետի 4-րդ ենթակետում նշված պրոֆեսիոնալ հաճախորդների դեպքում ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի լուծման ամսաթիվը), դադարեցման (պայմանագրի լուծման) հիմքը (հիմքերը):

40. Ներդրումային ծառայություններ մատուցող անձինք Կանոնակարգ 4/06-ի 23-րդ կետի համաձայն իրենց պրոֆեսիոնալ հաճախորդներից ստացված տեղեկությունների փոփոխությունների մասին տեղեկացնում են Կենտրոնական բանկին 1 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային՝ Ընթացակարգի 37-րդ կետով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 5. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

41. Բրոքերը Հաճախորդի հանձնարարականները կատարում է կամ հաղորդում է երրորդ անձանց ի կատարում միայն այն դեպքերում, երբ Հաճախորդի հաշվում առկա են այդ Հանձնարարականների համաձայն կատարվող գործարքով վերջնահաշվարկ կատարելու և Բրոքերի նկատմամբ Հաճախորդի պարտավորությունները մարելու համար բավարար դրամական միջոցներ, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարվում է կամ ի կատարումն է հաղորդվում/փոխանցվում Ոչ բավարար ծածկույթով գործարքի կնքման հանձնարարական, որի պայմանները կարգավորվում են առանձին համաձայնագրով:

42. Հանձնարարականի ընդունումը, ընդունված հանձնարարականի կատարումը և/կամ ի կատարում հաղորդումը մերժվում է, եթե՝
    1) այն չի ներկայացվել Պայմանագրին և Ընթացակարգին համապատասխան ձևով և բովանդակությամբ,
    2) այն չի ներկայացվել Պայմանագրով և Ընթացակարգով սահմանված կարգով,
    3) Բրոքերի մոտ հիմնավոր կասկածներ են առաջացել Հանձնարարականը ներկայացնող անձի՝ այն ներկայացնելու իրավասություն ունենալու վերաբերյալ՝ ինքնությունը պարզելու համար Պայմանագրով և Ընթացակարգով սահմանված գործողությունները կատարելու արդյունքում,
    4) Ընթացակարգի 83-րդ կետում սահմանված դեպքում,
    5) Բրոքերի գործակալները մերժում են համապատասխան Հաճախորդի կողմից ներկայացված և Բրոքերի կողմից իրենց հաղորդված Հանձնարարականի ընդունումը ի կատարումն և/կամ կատարումը՝ հաշվի առնելով նրանց կողմից որոշակի շուկաներում և ԱՀ-ներում գործարքների

կնքում/կատարումը ապահովելու հնարավորության բացակայությունը,

6) Բրոքերի համար իրենից անկախ ցանկացած պատճառով օբյեկտիվորեն անհնարին է դարձել Հանձնարարականի կատարումը կամ դրա հաղորդումը ի կատարում,
7) Համապատասխան ԱՀ-ի կամ Գործակալների կողմից սահմանվում կամ կիրառվում են Հանձնարարականի կատարումը անհնարին դարձնող արգելքներ և սահմանափակումներ:

43. Բրոքերային ծառայություններից օգտվելիս Հաճախորդը պարտավոր է՝
    1) ժամանակին Բրոքերին ներկայացնել Բրոքերի կողմից սահմանված արժեթղթերի հաշվի բացման և Բրոքերի կողմից Պայմանագրով նախատեսված այլ պահառուական գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը,
    2) Բրոքերին անմիջապես տեղեկացնել Բրոքերային Պայմանագրով և Ընթացակարգով ներկայացված տեղեկություններում/փաստաթղթերում ներառված տվյալների ցանկացած փոփոխության վերաբերյալ՝ այդպիսի փոփոխությունից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 6. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ԿԱՏԱՐՈՒՄԸ

44. Գործարք կնքելու համար Հաճախորդը Բրոքերին է ներկայացնում Հանձնարարական, որը պետք է պարունակի Գործարքի էական պայմանները: Հանձնարարականում կարող է նշվել նաև Պայմանագրով սահմանված՝ Հանձնարարականի տեսակներից մեկը, ինչպես նաև Հանձնարարականի վավերության (կատարման ենթակա լինելու) ժամկետները՝ արտահայտված օրերով կամ մինչև հետկանչում: Հանձնարարականում տեսակը նշված չլինելու դեպքում այն համարվում է Շուկայական պատվեր: Հանձնարարականի վավերության ժամկետ նշված չլինելու դեպքում այն վավեր է մինչև տվյալ ԱՀ-ում՝ գործարքի կատարման Հանձնարարականը ներկայացնելիս կամ դրանից հետո սկսված առաջին Առևտրային նստաշրջանի ավարտը: Գործարքների կնքման համար հիմք է հանդիսանում թղթային (Հավելված 2), ինչպես նաև Գործարքի էական պայմանները պարունակող՝ էլեկտրոնային փոստով, ինտերնետի միջոցով (առցանց), ֆաքսով փոխանցված կամ հեռախոսով Բրոքերին հաղորդված Հանձնարարականները:
45. Հաճախորդի կողմից Հանձնարարականը կարող է ներկայացվել գրավոր կամ ոչ գրավոր ձևով:
46. Գրավոր ձևով Հանձնարարականը ներկայացվում է Հաճախորդի կողմից էլեկտրոնային փոստի, ինտերնետի կամ ֆաքսի, իսկ Հաճախորդի ցանկության

դեպքում՝ թղթային ձևով:

47. Ոչ գրավոր ձևով Հանձնարարականի ներկայացման դեպքում Հանձնարարականը ընդունելու իրավասություն ունեցող Պատասխանատու անձը ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը ոչ գրավոր ձևով ստացված տեղեկատվության հիման վրա լրացնում և ստորագրում է Հանձնարարականի սահմանված ձևը՝ նշելով տեղեկատվության ստացման ժամանակը (ոչ թե իր կողմից Հանձնարարականի լրացման ժամկետը) որպեի ճշտությամբ և իր անունը, ազգանունը: Այդպիսի դեպքում Հանձնարարականում նշում է կատարվում, որ Հաճախորդի կողմից այն ներկայացվել է ոչ գրավոր ձևով:
48. Էլեկտրոնային փոստով Հանձնարարական ներկայացնելը նախընտրելով՝ Հաճախորդը պետք գիտակցում է, որ Բրոքերից անկախ տեխնիկական և այլ հանգամանքները հաշվի առնելով, հնարավոր է, որ ուղարկված Հանձնարարականը չհասնի Բրոքերին, նրան հասնի ուշացումով, ուղարկված լինի համապատասխան լիազորություն չունեցող երրորդ անձանց կողմից կամ վերջիններիս հայտնի դարձած լինի այլ միջոցներով, այդ թվում ցանցային խափանումների, ցանցային չարտոնված մուտքերի, գաղտնաբառերի չարտոնված օգտագործման և այլ միջոցներով ու եղանակներով: Հաճախորդը գիտակցում է, որ Բրոքերը ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրում սույն կետում նշված իրադարձությունների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար, իսկ Հաճախորդի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեից ստացված Հանձնարարականը Բրոքերը դիտարկում է որպես Հաճախորդից ստացված:
49. Հաճախորդի կողմից Հանձնարարականը էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ներկայացնելու դեպքում Հաճախորդը կարող է հավաստիանալ Բրոքերի կողմից Հանձնարարականը ստանալու փաստի վերաբերյալ հեռախոսազանգի և Բրոքերի լիազոր աշխատակցի հետ հեռախոսազրույցի միջոցով:
50. Հեռախոսով փոխանցվող Հանձնարարականները ձայնագրվում են Բրոքերի կողմից և հաճախորդը տալիս է իր համաձայնությունը Բրոքերի հետ իր հաղորդակցությունների փոխանակման ձայնագրությանը: Հեռախոսով հանձնարարական ընդունելիս Պատասխանատու աշխատակիցն իրավունք ունի իր հետ կապ հաստատած անձի ինքնությունը ճշտելու նպատակով վերջինիս ուղղել դրա համար անհրաժեշտ հարցեր, այդ թվում՝ հարցնել Հաճախորդին շնորհված ծածկագիրը, Պայմանագրի վավերապայմանները և Հաճախորդի նույնականացման համար անհրաժեշտ այլ հարցեր, և Հանձնարարականը ընդունել միայն Հաճախորդի պատշաճ նույնականացման դեպքում: Բրոքերը համապատասխան տեխնիկական միջոցների օգնությամբ գրանցում է

Հաճախորդի կողմից Հանձնարարականի ներկայացման և դրա բովանդակությունը հավաստող փաստը՝ ներառյալ ներկայացման ժամանակը՝ հաջորդաբար լրացնելով տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն: Ընդ որում, այդ տեխնիկական միջոցները պետք է թույլ չտան գրանցված տեղեկատվությունը որևէ կերպ փոխել:

51. Հեռախոսով փոխանցված Հանձնարարականը ներկայացնելիս Հաճախորդը արտասանում է Ընթացակարգի 50-րդ կետում նշված պայմանները, որից հետո Պատասխանատու աշխատակիցը կրկնում է դրանք, իսկ Հաճախորդը «հաստատում եմ» արտահայտության արտասանմամբ հաստատում է Պատասխանատու աշխատակցի կողմից Հանձնարարականի պայմանները ճշգրտորեն ընկալելու փաստը:
52. Ծածկագրին Հաճախորդի կողմից չտիրապետելու դեպքում Հաճախորդի կողմից Հանձնարարական ներկայացնելիս, Բրոքերը տվյալ պահին կարող է գեներացնել ժամանակավոր (մեկանգամյա օգտագործման) ծածկագիր, որն ուղարկվում է հաճախորդի հետ կնքված Պայմանագրում նշված էլ. փոստի հասցեին: Վաղեմության ժամկետը լրանալուց հետո Հաճախորդի Հանձնարարականի ընդունման համար հիմք կարող է հանդիսանալ Հաճախորդին տրամադրված ծածկագրային քարտը (ծածկագիրը): Ծածկագրային քարտը կորցրած հաճախորդի դիմումի հիման վրա վերաթողարկվում է նոր ծածկագրային քարտ, նախապես Հաճախորդից գանձելով քարտի տրամադրման՝ Բրոքերի կողմից սահմանված սակագինը:
53. Ֆաքսով փոխանցված Հանձնարարականը ընդունվում է ի կատարում, միայն եթե հաստատվել է Հաճախորդի կողմից հեռախոսով՝ Ընթացակարգի 50-րդ և 51-րդ կետերում նշված կարգով:
54. Թղթային ձևով Հանձնարարական (Հավելված 2) ներկայացնելու դեպքում Հաճախորդի կողմից Հանձնարարականը տրվում է 2 օրինակից, ընդ որում մեկ օրինակը մնում է Բրոքերի մոտ, իսկ մյուս օրինակը «Հանձնարարականն ընդունված է» նշագրմամբ և Հանձնարարականը ընդունելու իրավասություն ունեցող Պատասխանատու աշխատակցի ստորագրությամբ վերադարձվում է Հաճախորդին փոստով, ֆաքսով, առձեռն կամ էլեկտրոնային փոստով (էլեկտրոնային փոստով հետ ուղարկված Հանձնարարականը պետք է արտապատկերված և կցված լինի ուղարկված էլեկտրոնային նամակին): Էլեկտրոնային փոստով, ինտերնետով կամ ֆաքսով Հաճախորդի կողմից Հանձնարարականը տրվում է մեկ օրինակից, ընդ որում՝ այդ օրինակը մնում է Բրոքերի մոտ, իսկ Հաճախորդը էլեկտրոնային կապի միջոցով տեղեկացվում է Հանձնարարականն ընդունված լինելու մասին:
55. Բրոքերն իրավունք ունի մերժել Հաճախորդի Հանձնարարականի ընդունումը հետևյալ դեպքերում՝

1) Հաճախորդի կամ նրա լիազոր ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի, նույնականացման հաղորդված տվյալների բացակայության կամ անհամապատասխանության կասկածի դեպքում,
2) ՀՀ օրենսդրության, Ընթացակարգի և/կամ Պայմանագրի պահանջներին ներկայացված Հանձնարարականի անհամապատասխանության դեպքում:

56. Հաճախորդն իրավունք ունի ներկայացնել տրված Հանձնարարականի հետկանչի Հաղորդագրություն: Հաղորդագրությունը ընդունվում է ի կատարումն, եթե տվյալ հետկանչվող Հանձնարարականով Բրոքերի կողմից դեռևս Գործարքի կնքման հայտը կամ օֆերտան չի բավարարվել և/կամ ակցեպտավորվել: Հանձնարարականի հետ կանչման հաղորդումը համարվում է ընդունված հաղորդագրությունը Բրոքերի Պատասխանատու աշխատակցին հասնելու պահից: Հաճախորդի հետկանչման հաղորդումը ստանալու պահից մինչև Բրոքերի կողմից համապատասխան Հանձնարարականով համապատասխան ԱՀ-ից գործարքի կնքման հայտը հետ կանչելու հաստատվելն ընկած ժամանակահատվածում Հանձնարարականով Գործարքը կնքվելու դեպքում, Հանձնարարականը հետ կանչելու մասին հաղորդագրությունը Բրոքերի կողմից չի կատարվում:

57. Բրոքերը իրավունք ունի մերժել ընդունված Հանձնարարականի կատարումը նաև այն դեպքերում, եթե Հանձնարարականն ընդունելուց հետո պարզվում է, որ Հաճախորդի Բրոքերային հաշիվներում առկա չեն բավարար միջոցներ (բացառությամբ Ոչ բավարար ծածկույթով գործարքների)՝ Հանձնարարականը կատարելու և այդ հանձնարարականի կատարման համար սահմանված վճարները գանձելու համար, ընդ որում՝ Բրոքերին իրավունք է վերապահվում անակցեպտ կարգով, առանց Հաճախորդին նախապես ծանուցելու, գանձել Հաճախորդի հաշիվներում առկա գումարները՝ համապատասխան գործարքը կատարելիս կամ դրանից հետո ցանկացած ժամանակ: Հանձնարարականը կարող է չկատարվել նաև այն դեպքում, եթե Հաճախորդի հաշվում առկա միջոցները ծանրաբեռնված են այլ անձանց իրավունքներով կամ արգելադրված են:

58. Հանձնարարականի կատարումը մերժելու դեպքում Բրոքերն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հաճախորդին էլեկտրոնային փոստով կամ հեռախոսով՝ համապատասխան ծանուցում ուղարկելու միջոցով:

59. Կախված շուկայի տեսակից (բորսայական, արտաբորսայական, կարգավորված կամ ոչ) և վայրից, գործարքի բնույթից և կատարման ժամկետներից՝ Բրոքերի կողմից կարող են գրավոր սահմանվել Հանձնարարականի ներկայացման և հետ կանչման վերջնաժամկետներ, որոնց խախտմամբ ներկայացված հանձնարարականը կամ հետ կանչման հաղորդագրությունը չի կատարվում: Նշված վերջնաժամկետների սահմանումը հանդիսանում է Պայմանների

բաղկացուցիչ անբաժանելի մասը և պարտադիր է կողմերի համար: Վերջնաժամկետները սահմանող Բանկի համապատասխան կառավարման մարմնի ակտը նախապես տեղադրվում է Բրոքերի պաշտոնական ինտերնետային կայքէջում և/կամ առաքվում Հաճախորդին փոստային կամ էլեկտրոնային եղանակով:

60. Գործարքներ կնքելու համար ԱՀ-ների կամ Բանկի գործընկերների կողմից 1 հանձնարարականով գնվող/վաճառվող Ֆինանսական գործիքների նվազագույն քանակական/ծավալային սահմանափակումներ սահմանված լինելու դեպքում այդ սահմանափակումները տարածվում են նաև Հաճախորդի հանձնարարականների վրա, որի մասին Բրոքերը տեղյակ է պահում հաճախորդին:
61. Հաճախորդն ընդունում է, որ Հանձնարարականներով ձեռքբերման ենթակա Ֆինանսական գործիքների շրջանակը, Գործարքների ծավալները, Գործարքներով Հանձնարարականների ներկայացման վերջնաժամկետները սահմանափակվում են նշված Գործարքների կատարումը ապահովող Գործակալների և ԱՀ-ների կողմից սահմանված արժեթղթերի ցանկով, ծավալային սահմանափակումներով (սահմանաչափերով) և Հանձնարարականների ներկայացման (կատարման) ժամկետային սահմանափակումներով: Ամեն դեպքում Հանձնարարականները Բրոքերը ընդունում է Գործառնական օրվա ընթացքում, ընդ որում տվյալ ԱՀ-ում Առևտրային նստաշրջանի ավարտից հետո և մինչև մյուս Առևտրային նստաշրջանի սկսվելը ներկայացված Շուկայական պատվերը ենթակա չէ կատարման կամ ի կատարումն հաղորդման:
62. Հաճախորդը կարող է ինտերնետի միջոցով (առցանց) և/կամ ոչ բավարար ծածկույթով գործարք կնքելու Հանձնարարական ներկայացնել և այդ նպատակով Բրոքերից ստանալ դրամական կամ արժեթղթերի փոխառություն, եթե Բրոքերի հետ ունի կնքված համապատասխան լրացուցիչ համաձայնագիր՝ ըստ այդ համաձայնագրի պայմանների:

ԳԼՈՒԽ 7. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

63. Բրոքերը վարում է գրանցումներ Հաճախորդի կողմից տրված ամեն մի Հանձնարարականի վերաբերյալ:
64. Գրանցումները պետք է կատարվեն Հանձնարարականի ստացման պահից անհապաղ, սակայն ոչ ուշ, քան մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը:
65. Հաճախորդի կողմից տրված յուրաքանչյուր Հանձնարարականի վերաբերյալ գրանցումները առնվազն ներառում են հետևյալ տեղեկությունները՝

1) Հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) և(կամ) Հաճախորդին նույնականացնող համարը,
2) Հաճախորդի կողմից տրված Հանձնարարականում նշված գործարքի տեսակը (առք, վաճառք),
3) Հաճախորդի կողմից տրված Հանձնարարականի բնույթը, եթե դրանում նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրության պատվեր, Ածանցյալի իրականացման Պատվեր և այլն),
4) Հաճախորդի կողմից տրված Հանձնարարականի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),
5) արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (բացակայության դեպքում՝ թողարկողի/արժեթղթի անվանումը և արժեթղթերի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),
6) արժեթղթերի քանակը (ծավալային արժեթղթերի դեպքում՝ անվանական ծավալը),
7) միավորի գինը (ծավալային արժեթղթերի դեպքում չի լրացվում),
8) ընդհանուր ծավալը,
9) Հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումները (առկայության դեպքում),
10) Հաճախորդի կողմից տրված Հանձնարարականի ստացման ճշգրիտ ժամանակը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն,
11) Հանձնարարականը գրանցող Պատասխանատու անձի անունը, ազգանունը:

66. Հաճախորդի կողմից ներկայացված Հանձնարարականի գրանցումը կարող է կատարվել էլեկտրոնային եղանակով:

ԳԼՈՒԽ 8. ՈՉ ԲԱՎԱՐԱՐ ԾԱԾԿՈՒՅԹՈՎ ԵՎ ԱԾԱՆՑՅԱԼՆԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

67. Ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքմամբ բրոքերային ծառայություններ մատուցելու պայմանները և առանձնահատկությունները սահմանվում են Բրոքերի և Հաճախորդի միջև կնքվող լրացուցիչ համաձայնագրով, որը կնքվելու դեպքում հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և դրա վրա տարածվում են Ընթացակարգի պայմանները՝ այնքանով որքանով չեն հակասում դրա դրույթներին:
68. Ածանցյալներով Բրոքերային ծառայությունները մատուցվում են համապատասխան ածանցյալների առևտուր կազմակերպող ԱՀ-ների և Գործակալների կողմից սահմանված պայմանների համաձայն և դրանց կողմից սահմանված սահմանափակումները հաշվի առնելով:
69. Որոշակի Ածանցյալներով գործարքների հետ կապված Հաճախորդի բաց

դիրքի առկայության դեպքում՝ տվյալ ԱՀ-ում Աճանցյալի Ապահովման պահին Հաճախորդի հաշվում Աճանցյալի կատարումից բխող պարտավորությունները բավարարելու համար անհրաժեշտ Միջոցների անբավարարության դեպքում, Բրոքերին Ընթացակարգով իրավունք է վերապահվում՝ փակել Աճանցյալով Հաճախորդի բաց դիրքը՝ գնելով/վաճառելով Աճանցյալը: Միևնույն ժամանակ Ապահովման պահին Միջոցների բավարարության դեպքում՝ Ապահովման պահից մինչև Բրոքերի կողմից տվյալ Աճանցյալով բաց դիրքի փակումը կամ Աճանցյալի փաստացի կատարումն ընկած ժամանակահատվածում Բրոքերն իրավունք ունի չընդունել և ի կատարումն չփոխանցել Հաճախորդի այն Հանձնարարականները, որոնցով Գործարքների գինը գերազանցում է Հաճախորդի հաշվում առկա Միջոցների ընդհանուր արժեքի և Գործարքի կատարման համար անհրաժեշտ միջոցների տարբերությունը:

ԳԼՈՒԽ 9. ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ, ՊԱՀԱՌՈՒԱԿԱՆ ԵՎ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

70. Հաճախորդի համապատասխան դիմումի հիման վրա բացվում է բրոքերային հաշիվ (Հավելված 3): Բրոքերի կողմից ծառայությունների մատուցման համար նախատեսված կամ դրանց արդյունքում ստացված Հաճախորդի արժեթղթերը հաշվառվում են Բրոքերի և Հաճախորդի միջև կնքված պահառության պայմանագրի համաձայն բացված և սպասարկվող արժեթղթերի հաշիվներում:
71. Բրոքերային ծառայությունների մատուցման համար նախատեսված, ինչպես նաև դրանց արդյունքում ստացվող՝ Հաճախորդի դրամական միջոցները Բրոքերի կողմից փոխանցվում են Բրոքերային հաշվին՝ Գործարքի վերջնահաշվարկ իրականացնելու արդյունքում կամ Հաճախորդի գրավոր հանձնարարականի (Հավելված 1) հիման վրա նրա՝ Բրոքերի մոտ բացված բանկային հաշիվներից:
72. Բրոքերային հաշվում առկա դրամական միջոցների (այն չափով, որով դրանք ծանրաբեռնված չեն ընդունված և/կամ կատարված Հանձնարարականով, Բանկի կամ երրորդ անձանց իրավունքներով) և Պայմանագրի (Ընթացակարգի) համաձայն Բրոքերին վճարման ենթակա գումարների տարբերությունը հանդիսանում է Հաճախորդի նկատմամբ Բրոքերի անժամկետ պարտավորությունը:
73. Բրոքերային հաշվի մնացորդի դիմաց Բրոքերը Հաճախորդին տոկոսներ չի վճարում և տոկոսներ չի գանձում: Հաճախորդի Բրոքերային հաշվով գործառնությունները սահմանափակվում են հետևյալով.
    1) Բրոքերային հաշվից գումարների ելքագրում և փոխանցում Հաճախորդի՝ Բրոքերի մոտ բացված ընթացիկ բանկային հաշվին կամ այլ բանկերում

Հաճախորդի հաշիվներին,

2) Դրամական միջոցների մուտքագրում Հաճախորդի՝ Բրոքերի մոտ բացված ընթացիկ բանկային հաշվից,
3) Պայմանագրի և Ընթացակարգի համաձայն Վերջնահաշվարկ կատարելու համար անհրաժեշտ գործառնություններ:

74. Բրոքերային հաշիվներով գործառնությունները կատարվում են Հաճախորդի համապատասխան Հանձնարարականների հիման վրա, ընդ որում՝ Հանձնարարականը հանդիսանում է համապատասխան չափով Բրոքերային հաշվով գործառնություն կատարելու հանձնարարական (Հավելված 2): Ընթացակարգի 73-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված գործառնությունները կատարվում են համապատասխան հանձնարարական ներկայացնելուց հետո առավելագույնը 2 գործառնական օրվա ընթացքում՝ Բանկի ներքին իրավական ակտերին համապատասխան:
75. Առանց Հաճախորդի հանձնարարականի Բրոքերային հաշվից գումարներ դուրս են գրվում դատարանների օրինական ուժի մեջ մտած վճիռների հիման վրա, ինչպես նաև օրենքով, Հաճախորդի հետ Բրոքերի կնքած բոլոր պայմանագրերով սահմանված դեպքերում:
76. Բրոքերային հաշվով գործարք կատարելու լիազորություն ունեն նույն անձինք, որոնք իրավասու են ներկայացնել Հանձնարարականներ Պայմանագրի համաձայն:
77. Պայմանագրով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որ Բրոքերը Պայմանագրի շրջանակներում իրեն տրամադրված և ստացված միջոցներն օգտագործի ի շահ իրեն (Բրոքերի), այդ թվում գրավադրի դրանք՝ առանց խախտելու Հաճախորդի նկատմամբ իր Ֆիդուցիար պարտականությունները: Բրոքերը Հաճախորդի Միջոցները կարող է պահել անվանատիրոջ և իր կամ իր անունով այլ ֆինանսական հաստատություններում (այդ թվում՝ արտասահմանյան) բացված բանկային (թղթակցային) և/կամ դրամական միջոցների հաշվառման այլ հաշիվներում՝ ՀՀ կամ գործարքի կնքման այլ վայրի օրենսդրության և դրան համապատասխան կնքված պայմանագրերի համաձայն: Բրոքերին իրավունք է վերապահվում գործարքներ կնքելիս համախմբել Հաճախորդի Միջոցները իր այլ հաճախորդների, ինչպես նաև իր սեփական միջոցներին՝ ամեն դեպքում, սակայն, պահպանելով իր և Հաճախորդի, ինչպես նաև իր տարբեր հաճախորդների միջոցների առանձնացված հաշվառումը՝ ներքին հաշվառման համակարգի պատշաճ վարման միջոցով:
78. Պայմանագրով մատուցվող Բրոքերային ծառայությունների ընթացքում անհրաժեշտ պահառուական և վճարահաշվարկային գործողությունները, Հաճախորդի հաշիվներով գործառնությունները կարգավորվում են համապատասխան պահառության պայմանագրով, Բանկի Վարչության 2019

թվականի ապրիլի 17-ի թիվ 168/02Լ որոշմամբ հաստատված «Արժեթղթերի պահառության իրականացման ընթացակարգ»-ով, Ընթացակարգով և Բրոքերի այլ ներքին իրավական ակտերով: Բրոքերային ծառայությունները մատուցելիս ձեռքբերվող և վաճառքի համար նախատեսված՝ Հաճախորդի արժեթղթերը հաշվառվում են Բրոքերի կողմից Հաճախորդի համար Պահառության պայմանագրի համաձայն բացված Բրոքերային ենթահաշիվ հանդիսացող արժեթղթերի հաշվում:

79. Ընթացակարգի համաձայն տրված՝ գործարք կատարելու Հանձնարարականը հանդիսանում է նաև Հաճախորդի արժեթղթերի հաշիվներով համապատասխան պահառուական գործառնություն կատարելու հանձնարարական, այդ թվում՝ պահառության պայմանագրի իմաստով, մասնավորապես՝
    1) արժեթղթերի ընդունում/մուտքագրում հաշվին,
    2) արժեթղթերի փոխանցում/ելքագրում հաշվից,
    3) արժեթղթերի արգելադրում/գրավադրում հօգուտ երրորդ անձանց և/կամ Բրոքերի:

80. Հաճախորդը կարող է նաև Բրոքերին ներկայացնել իր արժեթղթերի հաշվով որոշակի գործառնություն (մուտքագրում, ելքագրում, փոխանցում, արգելադրում և այլն) կատարելու հանձնարարական՝ անկախ Բրոքերային ծառայություններով հանձնարարական ներկայացնելուց: Նման դեպքում պահառուական գործառնության հանձնարարականը ներկայացվում է Պահառության պայմանագրով կարգով և ժամկետներում:

81. Ընթացակարգի իմաստով Վերջնահաշվարկ է հանդիսանում Բրոքերի կողմից տվյալ Հանձնարարականով կատարված գործարքի արդյունքում Հաճախորդի պարտավորությունների կատարումը և գործարքի մյուս կողմից կատարման ընդունումը, մասնավորապես՝
    1) արժեթղթերի ընդունում, հաշվառում և փոխանցում,
    2) դրամական միջոցների փոխանցում, ընդունում և հաշվառում, Աճանցյալներով տատանվող հաշվեկշռի լրացում,
    3) Ընթացակարգի 81-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված գործողությունները կատարելու համար արժութային փոխարկումներ:

82. Եթե Բրոքերային հաշվում ներառված հաշիվների արժույթները չեն համապատասխանում Հանձնարարականով կնքված գործարքով վերջնահաշվարկ կատարելու համար անհրաժեշտ արժույթին կամ Հանձնարարականով գործարքի կատարման արժույթով Հաճախորդի հաշվի մնացորդը չի բավարարում համապատասխան Հանձնարարականով գործարքի արդյունքներով վերջնահաշվարկ կատարելու համար, Բրոքերը, ի կատարում համապատասխան Հանձնարարականով գործարքի վերջնահաշվարկի,

իրականացնում է համապատասխան արժութային փոխարկումը՝ տվյալ օրվա դրությամբ Բանկում սահմանված կամ Հաճախորդի հետ փոխհամաձայնեցված՝ ՀՀ դրամի, Վերջնահաշվարկի և սույն կետում նշված արժույթների փոխարժեքին համապատասխան: Բրոքերը փոխարկումը իրականացնում է՝ 1-ին հերթին օգտագործելով AMD, երկրորդ հերթին՝ USD, երրորդ հերթին՝ EUR, չորրորդ հերթին՝ RUB հաշիվների մնացորդները:

83. Եթե Հանձնարարականով գործարքի վերջնահաշվարկի կատարման համար անհրաժեշտ արժույթի հաշվարկային դրույքը ՀՀ կենտրոնական բանկի կողմից չի սահմանվում, Բրոքերը կարող է չկատարել կամ ի կատարումն չփոխանցել Հաճախորդի Հանձնարարականը:

84. Բրոքերը Հաճախորդի Վերջնահաշվարկը իրականացնում է առանց Հաճախորդից լրացուցիչ հանձնարարականներ ստանալու, որի համար Հաճախորդը պարտավոր է ապահովել անհրաժեշտ միջոցներով՝ Ընթացակարգի համաձայն Հաճախորդի հաշվում համապատասխան Միջոցների առկայությունը ապահովելով: Ընթացակարգի սույն կետում նշված պարտավորությունը չի տարածվում ոչ բավարար ծածկույթով գործարքներ կնքելու դեպքերի վրա, սակայն այդ դեպքում Հաճախորդի հաշվում պետք է ապահովվի Բրոքերի նկատմամբ պարտավորությունները ապահովելու համար անհրաժեշտ Միջոցների առկայությունը՝ համաձայն Ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքման վերաբերյալ լրացուցիչ համաձայնագրի:

ԳԼՈՒԽ 10. ԲՐՈՔԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

85. Պայմանագրի համաձայն մատուցվող ծառայությունների դիմաց Բրոքերը հաճախորդից գանձում է վճարներ՝ ըստ Բրոքերի սահմանած Բրոքերային ծառայությունների մատուցման սակագների:

86. Սակագները կարող են միակողմանիորեն փոխվել Բրոքերի կողմից և ուժի մեջ են մտնում Հաճախորդին այդ փոփոխության մասին ծանուցելու և/կամ Բրոքերի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու օրվանից:

87. Հաճախորդը պարտավոր է հատուցել Բրոքերի կողմից Հաճախորդի Հանձնարարականների կատարման և/կամ ի կատարումն հաղորդման հետ կապված գործառնական ծախսերը, որոնք կարող են առաջանալ Բրոքերի կողմից երրորդ անձանց ներգրավմամբ գործարքներ կնքելու և վերջնահաշվարկ ապահովելու անհրաժեշտությունից, մասնավորապես՝ ԱՀ-ների և/կամ այլ միջնորդների կողմից Բրոքերից գանձվող վճարներ (բացառությամբ Գործակալների հետ կնքված պայմանագրերով սահմանված սակագներով գանձվող միջնորդավճարների) և այլն, որոնք տարբեր են՝ կախված ԱՀ-ից, գործարքի տեսակից, ծավալից և այլ հանգամանքներից: Նման ծախսերը չեն

ներառվում սակագներում: Հաճախորդին ներկայացվող հաշվետվություններում արտացոլվում են թե՛ նշված ծախսերը և թե՛ դրանց հատուցման համար Բրոքերի կողմից իրականացված գանձումներն ու պահումները:

88. Եթե Բրոքերը օրենսդրության համաձայն պարտավոր է իրականացնել Հաճախորդի հարկային գործակալի գործառույթները, ապա գանձում և փոխանցում է Հաճախորդի կողմից վճարման ենթակա համապատասխան հարկերը:

89. Ընթացակարգում և Պայմանագրում նշված վճարները, ծախսերի հատուցումները, տոկոսները, տույժերն ու տուգանքները և Հաճախորդի՝ Բրոքերի նկատմամբ ցանկացած այլ տեսակի պարտավորությունների գումարները Բրոքերը պահում է Հաճախորդի կողմից իրեն տրամադրված միջոցներից և/կամ անակցեպտ կարգով գանձում է Հաճախորդի բանկային հաշիվներից, իսկ Հաճախորդը պարտավոր է ապահովել համապատասխան միջոցների առկայությունը նշված հաշիվներին: Բրոքերը հանձնարարականի կատարումից/հաղորդումից անմիջապես հետո գանձում է համապատասխան միջոցները Բրոքերային հաշվից, ընդ որում՝ համապատասխան արժույթով Բրոքերային հաշվում միջոցների անբավարարության դեպքում պահանջվող գումարը գանձվում է այլ արժույթով բրոքերային ենթահաշիվներից Ընթացակարգի 82-րդ կետում նշված հաջորդականությամբ:

90. Բրոքերի կողմից սահմանված սակագները չեն ներառում ԱՀ, բորսաների, պահառուների և այլ անձանց) կողմից գանձվող միջնորդավճարները (բացառությամբ քլիրինգային վճարների), որոնք, ի հայտ գալու դեպքում, գանձվում են Հաճախորդի Միջոցներից:

91. Հաճախորդի կողմից համապատասխան պահանջ ներկայացնելու դեպքում Բրոքերը տրամադրում է այն աղբյուրները, որտեղից կարելի է տեղեկություններ ստանալ Ընթացակարգի 90-րդ կետում նշված միջնորդավճարների վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 11. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

92. Բրոքերը էլեկտրոնային փոստի միջոցով և/կամ Հաճախորդի գրավոր դիմումի դեպքում՝ թղթային ձևով, Հաճախորդին ներկայացնում է ընթացիկ (ըստ յուրաքանչյուր գործարքի) և պարբերական ամսական հաշվետվություններ՝ Հաճախորդի հաշվի սկզբնական մնացորդի (դիրքի), շարժի և վերջնական մնացորդի (դիրքի), ինչպես նաև Հաճախորդի հաշվում արտացոլված ակտիվներով (դրամական միջոցներ և արժեթղթեր) գործարքների և Միջոցների շարժերի վերաբերյալ՝ ամիսը մեկ անգամ, բացառությամբ ԱՀ միջոցով կնքվող գործարքների վերաբերյալ հաշվետվությունների, որոնք ներկայացվում են Համակարգի միջոցով՝ հաճախորդի համաձայնության դեպքում:

93. Բրոքերը Հաճախորդին Ընթացակարգի 92-րդ կետում նշված բովանդակությամբ հաշվետվությունները առաքում է՝
    1) ամսական հաշվետվությունը՝ մինչև հաշվետու ամսին հաջորդող ամսվա 15-ը:
    2) ընթացիկ (ըստ յուրաքանչյուր գործարքի) հաշվետվությունը՝ մինչև գործարքի կնքմանը հաջորդող Գործառնական օրվա ավարտը, բացառությամբ ԱՀ միջոցով ստացվող հաշվետվությունների, որոնք կարող են տրամադրվել ավելի ուշ (սակայն առաջին իսկ հնարավորության դեպքում)՝ համակարգի խափանման կամ պայմանների փոփոխման արդյունքում:
94. Բրոքերը Հաճախորդին Ընթացակարգի 92-րդ կետում նշված բովանդակությամբ հաշվետվություն առաքում է նաև ըստ Հաճախորդի պահանջի՝ դրանում նշված ժամանակահատվածի կտրվածքով՝ այդպիսի պահանջ ներկայացնելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում: Ամսական ըստ պահանջի մեկ հաշվետվություն հաճախորդին ներկայացվում է անվճար:
95. Ընթացակարգի 93-րդ կետով սահմանված ամսական Հաշվետվությունը համարվում է ընդունված, եթե Հաճախորդը այն ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում գրավոր չի առարկում դրա բովանդակության վերաբերյալ:
96. Ընթացակարգի 93-րդ կետով սահմանված Ընթացիկ հաշվետվությունը համարվում է ընդունված, եթե հաճախորդը այն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում չի առարկում դրա բովանդակության վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 12. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

97. Բրոքերը և Հաճախորդը տեղեկատվություն են փոխանակում հետևյալ կապի միջոցներով՝ հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ, ինտերնետային ցանցի, բնօրինակ փաստաթղթերի առձեռն հանձնում՝ ստացման փաստը հավաստող ստորագրությամբ: Հաճախորդը համաձայնում է, որ նշված միջոցներից ցանկացածը իր համար հանդիսանում է կապի հուսալի միջոց, սակայն տեղեկատվության փոխանակումը հիմնականում տեղի է ունենալու էլ. փոստի և ինտերնետի միջոցով:
98. Փաստաթղթաշրջանառությունը և տեղեկատվության փոխանակումը իրականացվում են հայերեն լեզվով, սակայն Հաճախորդի պահանջով բրոքերային ծառայությունների մատուցման հետ կապված փաստաթղթաշրջանառությունը և տեղեկատվության փոխանակումը Պայմանագրի համաձայն կարող են վարվել անգլերենով և/կամ ռուսերենով:

ԳԼՈՒԽ 13. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

99. Բրոքերը և/կամ Հաճախորդը պատասխանատվություն են կրում Պայմանագրով ստանձնած իրենց պարտականությունների պատշաճ կատարման համար և պարտավոր են այդ պարտականությունները խախտելու դեպքում հատուցել մյուս կողմին պատճառված վնասը:
100. Բրոքերը և/կամ Հաճախորդը պատասխանատվություն են կրում Պայմանագրով սահմանված իրենց հայտարարությունների և հավաստիացումների արժանահավատության համար և պարտավոր են հատուցել մյուս կամ երրորդ կողմին այդպիսի հայտարարությունների և հավաստիացումների՝ իրականությանը չհամապատասխանելու արդյունքում պատճառված վնասը: Բրոքերը և/կամ Հաճախորդը ազատվում են Ընթացակարգով (Պայմանագրով) միմյանց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դրա պատճառ է հանդիսացել մյուս կողմի՝ Պայմանագրով սահմանված հայտարարությունների և հավաստիացումների իրականությանը չհամապատասխանելը:
101. Ցանկացած դեպքում Բրոքերի պատասխանատվությունը Հաճախորդի առջև սահմանափակվում է Հանձնարարականների խախտմամբ Գործարքներ կնքելու կամ Ընթացակարգով սահմանված իրավական հիմքերի բացակայության դեպքերում Հանձնարարականը չկատարելու դեպքերով՝ դիտավորություն կամ ակնհայտ անփութություն ցուցաբերելու արդյունքում նրան պատճառված իրական վնասի չափով:
102. Բրոքերը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց, այդ թվում՝ Գործարքների կնքման գործընթացում Բրոքերի կողմից ներգրավված Գործակալների (ենթակոմիսիոներների) և/կամ Հաճախորդի միջոցները հաշվառելու համար որպես պահառու ընտրված անձանց անվճարունակության կամ սնանկության, ինչպես նաև նրանց կողմից գործարքներով պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով Հաճախորդին պատճառված վնասի համար, եթե չգիտեր և չէր կարող իմանալ նշված հանգամանքների առկայության կամ անխուսափելիության մասին:
103. Հաճախորդը պարտավորվում է հատուցել Բրոքերի կրած ցանկացած վնաս, որը արդյունք է հանդիսացել Պայմանագրի և Ընթացակարգում նշված պայմանների համաձայն Բրոքերի կողմից ծառայությունների մատուցման շրջանակներում երրորդ անձանց կողմից Բրոքերին ներկայացված պահանջների բավարարման: Հաճախորդը ազատվում է պատասխանատվությունից միայն այն դեպքում, եթե այդպիսի պահանջների հիմք են հանդիսացել Բրոքերի՝

Հաճախորդի գործողություններով, այդ թվում՝ Հանձնարարականներով չպայմանավորված անիրավաչափ գործողությունները:

104. Հաճախորդի Հանձնարարականներով կատարված գործարքների մյուս կողմի կողմից այդ գործարքով իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու ռիսկը կրում է Հաճախորդը, իսկ Բրոքերը հավաստում է, որ լավագույն ջանք կգործադրի՝ պատշաճ կատարում պահանջելու համար, սակայն նշվածի վերաբերյալ ոչ մի երաշխիք չի տալիս և պարտավորություն չի ստանձնում:

105. Հաճախորդն ընդունում է, որ հաշվի առնելով այն, որ Հանձնարարականների կատարումը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս տեղի է ունենում կարգավորված շուկաներում՝ հիմնականում Գործակալների շղթայի միջոցով և վերջիններիս կողմից, Բրոքերը Հաճախորդի Հանձնարարականները միայն փոխանցում/հաղորդում է Գործակալներին ի կատարումն, և վերջիններս իրենց հերթին այն կարող են նույնպես ի կատարումն փոխանցել իրեն ենթագործակալներին: Հաճախորդն ընդունում է, որ Բրոքերը նման պայմաններում հնարավորություն չունի շրջահայացություն ցուցաբերել այդպիսի ենթագործակալ անձանց ընտրության հարցում, հետևաբար Բրոքերը ազատվում է Հանձնարարականի հիման վրա կնքված գործարքներով երրորդ անձանց կողմից իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվությունից: Բրոքերը համարվում է պատշաճ շրջահայացություն չցուցաբերած միայն այն դեպքում, երբ Հանձնարարականները կատարող կամ հաղորդող Գործակալներին ընտրելու/հնարավորություն ունենալով՝ ընտրել է այնպիսի անձ, որի սնանկության/անվճարունակության կամ դրա անխուսափելիության մասին տեղյակ է եղել ինքը՝ այդպիսի ընտրություն կատարելիս:

106. Բրոքերը պատասխանատվություն չի կրում նաև այն դեպքերում, երբ Հանձնարարականը կամ այլ հաղորդագրությունը իրեն առաքվել է Հաճախորդի անունից, սակայն դրա լիազորությունը չունեցող երրորդ անձանց կողմից, և եթե ողջամիտ միջոցներ ձեռք առնելով փորձել է ստուգել Հանձնարարական ներկայացնողի ինքնությունը և այդպիսի ստուգման արդյունքում ակնհայտ և միանշանակ պարզ չի եղել, որ Հանձնարարականն ուղարկվել է դրա լիազորությունը չունեցող անձի կողմից:

107. Հաճախորդին անհատականացնող տվյալների, այդ թվում Հաճախորդին տրամադրված ծածկագրային քարտը կորցնելու, երրորդ անձանց, այդ թվում Հաճախորդի աշխատողը հանդիսացող, սակայն հանձնարարական ներկայացնելու լիազորություն չունեցող անձանց ծածկագիրը հայտնի դառնալու պարագայում Հաճախորդը, պարտավոր է անհապաղ՝ Ընթացակարգում նշված կապի հուսալի միջոցներով, ծանուցում ուղարկել Բրոքերին՝ նշված փաստերի

վերաբերյալ, որի պարագայում Հաճախորդին՝ վերջինիս դիմումի հիման վրա, կտրամադրվեն նոր անհատականացնող տվյալներ և ծածկագրային քարտ: Մինչև համապատասխան ծանուցում ստանալը Հաճախորդի անունից Հանձնարարական ներկայացնողի կողմից ներկայացված տվյալների և Հաճախորդին անհատականացնող տվյալների համապատասխանության դեպքում Հանձնարարականը համարվում է ներկայացված Հաճախորդի իրավասու անձի կողմից, և Բրոքերը դրանք դիտարկում է որպես իրավասու անձի կողմից ներկայացված՝ պատասխանատվություն չկրելով Հաճախորդի առջև իրավասություն չունեցող անձանց կողմից անհատականացնող տվյալների գիտությամբ և օգտագործմամբ Հանձնարարականները ներկայացնելու և դրանք կատարվելու արդյունքում Հաճախորդի կրած կորուստների համար:

108. Բրոքերը պատասխանատվություն չի կրում ԱՀ-ների գործողությունների կամ անգործության արդյունքում, ինչպես նաև Գործարքի կողմ հանդիսացող անձանց կողմից Հաճախորդի Միջոցներով Վերջնահաշվարկի չկայացման կամ ոչ պատշաճ իրականացման համար՝ անկախ դրա պատճառներից, ինչպես նաև ցանկացած բնույթի տեխնիկական խափանումների (այդ թվում այն դեպքերում, երբ ծառայությունները մատուցվում են Հաճախորդին ԱՀ-ի միջոցով և տեղի է ունենում ԱՀ-ի տեխնիկան խափանում) արդյունքում Հաճախորդին պատճառված վնասի համար, եթե չի ապացուցվում, որ այդպիսի խափանումները և վնասը տեղի են ունեցել Բրոքերի դիտավորության և/կամ անգործության արդյունքում:

ԳԼՈՒԽ 14. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵԼԸ

109. Ընթացակարգը, լինելով Պայմանագրի անբաժանելի մասը, Հաճախորդի համար ուժի մեջ են մտնում Պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից և գործում են մինչև Պայմանագրի գործողության դադարումը:

ԲԱԺԻՆ III. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

110. Ընթացակարգով սահմանված գործընթացներում ներգրավված Բրոքերի աշխատողներն անհատական պատասխանատվություն են կրում Բրոքերի ներքին իրավական ակտերով, նրանց հետ կնքված աշխատանքային և նյութական պատասխանատվության պայմանագրերով՝ Ընթացակարգով նրանցից յուրաքանչյուրի համար սահմանված աշխատանքային պարտականությունները ճշգրիտ և պատշաճ չիրականացնելու համար:

ԳԼՈՒԽ 2. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

111. Բրոքերային գործառնությունների արդյունքների հետ կապված՝ Հաճախորդներից բողոքներ և դիմում-առաջարկություններ Բրոքերին կարող են փոխանցվել գրավոր, բանավոր, պատվիրված նամակով, էլեկտրոնային փոստով, առձեռն կամ տեղեկատու հեռախոսով: Փոխանցված բողոքների և դիմում-առաջարկությունների հետ աշխատանքները, դրանց նկատմամբ հսկողությունը և պատասխանատվությունը, Բրոքերի Վարչությանը և Խորհրդին ներկայացվող հաշվետվությունների ձևերը և ժամկետները սահմանված են Բանկի Խորհրդի 2017 թվականի մարտի 22-ի թիվ 08/05Լ-Հ որոշմամբ հաստատված «Հաճախորդներից ստացված բողոքների և դիմում-առաջարկությունների հետ տարվող աշխատանքների կարգ»-ով:

112. Ընթացակարգով սահմանված դրույթների կատարման հսկողությունն իրականացնում է Պատասխանատու ստորաբաժանումը, իսկ վերահսկողությունը՝ Ներքին աուդիտի վարչությունը:

Հավելված 1

Դրամական միջոցների տեղափոխման հանձնարարական N __

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Հանձնարարականի տրման պահը		*րոպե/ժամ/օր/ամիս/տարի*	
Հաճախորդ			
Բրոքերային հաշվի կոդ			
Միջոցների տեղափոխման ուղղություն		**Բրոքերային հաշիվ**	**Ընթացիկ հաշիվ**
		Ելք	Մուտք
		Մուտք	Ելք
Հաշվեհամար			
Արժույթ			
Գումար			
Գումար բառերով			
Հաճախորդ Ստորագրություն		Հանձնարարականն ընդունող Ստորագրություն	

Հավելված 2

Գործարքի իրականացման հանձնարարական N __

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Հաճախորդի հետ կնքված պայմանագրի համարը և ամսաթիվը	
Հանձնարարականի տրման պահը	*րոպե/ժամ/օր/ամիս/տարի*
Գործարքի ուղղվածություն	☐ Առք՝ նոր երկար դիրքի բացում ☐ Առք՝ նախկինում բացված երկար դիրքի ծավալի ավելացում ☐ Առք՝ նախկինում բացված կարճ դիրքի փակում կամ մասնակի փակում ☐ Վաճառք՝ նոր կարճ դիրքի բացում ☐ Վաճառք՝ նախկինում բացված կարճ դիրքի ծավալի ավելացում ☐ Վաճառք՝ նախկինում բացված երկար դիրքի փակում կամ մասնակի փակում
Ֆինանսական գործիքի տեսակ	
Թողարկողի/արժեթղթի անվանում	
Բորսայական հապավում (սիմվոլ)	
Գործարքի տիպը	☐ Բորսայական ☐ Արտաբորսայական
Ֆինանսական գործիքի քանակ (ծավալ)	
Լիմիտային գին	
Ստոպ գին	
Հայտի տեսակը	☐ Շուկայական ☐ լիմիտային ☐ Ստոպ ☐ Ստոպ Լիմիտային
Այլ պայմաններ	☐ Անմիջապես բավարարել կամ հանել ☐ Պահել հերթում մինչև բավարարումը ☐ Նշել այլ մանրամասներ
Հաճախորդ Ստորագրություն	Հանձնարարականն ընդունող Ստորագրություն

Հավելված 3

ԴԻՄՈՒՄ

Բրոքերային հաշվի/ենթահաշիվների բացման

. . . . . .

(ֆիզիկական անձի անուն ազգանուն կամ կազմակերպության անվանում)

ի դեմս . . . . . .
խնդրում է

(լիազորված անձ)

Բանկի բրոքերային ծառայությունների շրջանակներում գործառնություններ իրականացնելու նպատակով բացել բրոքերային հաշիվ հետևյալ ենթահաշիվներով.

- ✓ Դրամական ենթահաշիվ ☐ հատ (նշել արժույթները . . . . .)
- ✓ Արժեթղթերի ենթահաշիվ ☐ հատ (նշել արժույթները. . . . .)
- ✓ Այլ ֆինանսական գործիքների ենթահաշիվ ☐ հատ (նշել արժույթները. . . . .)

Դիմումին կից ներկայացվում է

- ➢ Ֆիզիկական անձի համար՝
  Հաճախորդի անձնագրի և սոցիալական քարտի (քարտի առկայության դեպքում) պատճենները
- ➢ Իրավաբանական անձի համար՝
  Հաճախորդի կանոնադրության պատճենը, գրանցման վկայականը (անհրաժեշտության դեպքում նաև լիազորագիրը)

Հաճախորդ՝ …… ……

(ստորագրություն) /Անուն Ազգանուն/

«___» _____20____թ.

Հավելված 4

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԻ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՑԱՆԿԸ

1. Բանկի կողմից ներդրումային ծառայություններ մատուցելիս առաջացող հնարավոր շահերի բախումների տեսակները հետևյալն են՝
   1) Հաճախորդի հետ արժեթղթերի առուվաճառքի գործարքների կնքում շուկայականից տարբերվող գներով՝ ի օգուտ Բանկի կամ դրա աշխատակցի և ի վնաս Հաճախորդի,
   2) Հաճախորդին պատկանող արժեթղթերի վաճառք շուկայականից ավելի ցածր գնով Բանկին, Բանկի աշխատակիցներին կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց,
   3) Հաճախորդին պատկանող միջոցների ներդրում բանկի, բանկի աշխատակիցների և/կամ բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց պատկանող արժեթղթերում,
   4) Հաճախորդի միջոցների հաշվին ավելորդ կամ վերջինիս շահերին չհամապատասպանող գործարքների իրականացում, որը նպատակ է հետապնդում մեծ ծավալներով միջնորդավճարների գանձում հաճախորդից,
   5) Հաճախորդի կողմից տրամադրված ծառայողական տեղեկությունների օգտագործումը ի օգուտ Բանկի, Բանկի աշխատակցի կամ այլ փոխկապակցվախ անձի, ի վնաս հաճախորդի.
   6) Արժեթղթերով այնպիսի գործարքների իրականացումը, որոնք կարող են լինել ի շահ մեկ հաճախորդի և ի վնաս մեկ այլ հաճախորդի,
2. Նշված հնարավոր շահերի բախումների ցանկը սպառիչ և ամբողջական չէ: Ներդրումային գործունեությունը կարող է ուղեկցվել շահերի բախումների նաև այլ դեպքերով:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼԻՍ

3. Շահերի հնարավոր բախումները կանխարգելելու նպատակով Բանկը կիրառում է հետևյալ միջոցառումները՝

1) Բանկի աշխատակիցը հաճախորդների գործարքները կնքում է հաճախորդի կողմից ներկայացված համապատասխան պատվերի հիման վրա՝ պատշաճ ձևակերպված,
2) Խուսափել այնպիսի գործարքների կնքումից, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ Հաճախորդի շահերի վրա:

4. Արժեթղթերի շուկայում գործառնություններ իրականացնելիս Բանկը գործում է ելնելով բացառապես Հաճախորդի շահերի պաշտպանությունից: Այդ նպատակով բանկի համապատասխան աշխատակիցները պարտավոր են՝
   1) Պահպանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, Բանկի ներքին կանոնները, ինչպես նաև աշխատանքային և մասնագիտական էթիկայի կանոնները,
   2) Չիրականացնել հաճախորդի շահերին հակասող գործարքներ, որոնք արդյունքում կհանգեցնեն վերջինից գանձվող միջնորդավճարների և այլ վճարների ծավալների մեծացմանը,
   3) Գործել ազնիվ և բարեխիղճ:
5. Իր կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին գործարքներ իրականացնելիս Բանկը և համապատասխան աշխատակիցը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի դրանք կատարվեն անկողմնակալ, անհապաղ և ճշգրիտ: Այդ միջոցառումները պետք է հնարավորություն տան Հաճախորդի այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարել ըստ ներդրումային ծառայության մատուցող անձի կողմից դրանց ստացման հաջորդականության:
6. Իր կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին գործարքներ իրականացնելիս Բանկը և համապատասխան աշխատակիցը պետք է.
   1) Համոզվի, որ գործարք կատարելու համար պատվերները պատշաճ կերպով գրանցվել և ներկայացվել են կատարման,
   2) Այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարի ըստ դրանց ստացման հաջորդականության, բացառությամբ, եթե պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում,
   3) Համապատասխան Հաճախորդի պատվերի առկայության դեպքում Բանկը խուսափում է պատվերի առարկա գործարքին նույնական գործարք իրականացնելուց նախքան Հաճախորդի պատվերի կատարումը,
   4) Հաճախորդին անհապաղ տեղիակ պահի այն էական դժվարությունների կամ բացասական հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում հաճախորդի պատվերի ճշգրիտ կատարումը:

Հավելված 5

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լեվերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների ռիսկայնության տեղեկացվածության վերաբերյալ

Ես՝ ----------,

անվանումը, կազմակերպական-իրավական ձևը (անունը, ազգանունը, հայրանունը)

տեղյակ եմ, որ Լեվերիջով գործարքները, այդ թվում՝ Ֆորեքս գործարքներն ունեն բարձր ռիսկայնություն, և այս գործարքների կնքումը համապատասխանում է միայն այն հաճախորդներին, որոնք պատրաստ են կորցնել իրենց կողմից նախապես ներդրված ապահովվածության գումարը (մարժան)։ Գիտակցում եմ նաև, որ այս գործարքներին բնորոշ են զգալի գնային տատանումներ, որոնց արդյունքում կարող եմ ինչպես բարձր եկամուտներ ստանալ, այնպես էլ զգալի կորուստներ կրել։

_____

(ստորագրություն)

_____ _____ 20 թ.